ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՎԱԿԱՆԱՑՄԱՆ (ԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԾՄԱՆ) ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ՓՈՒԼԵՐԸ

Նարինե Դավթյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Իրավունքի և օրենքի տարբերակմամբ կառուցված իրավագիտության դիրքերից՝ իրավունքի իրականացման կառուցակարգի օբյեկտ են իրավունքը և դրա էությունն արտահայտող իրավական սկզբունքներն ու իրավական նորմերը: Իրավունքի իրականացումը որպես գործընթաց ենթադրում է ոչ միայն իրավական նորմերի կենսագործում փաստական իրավաչափ վարքագծում, այլ նաև համապատասխան ինստիտուտների կիրառմամբ իրավունքի էության, սկզբունքի, գաղափարի (իդեայի) անմիջական, ուղղակի կենսագործում՝ նորմատիվ կարգավորման բացակայության դեպքում կամ իրավունքից շեղված նորմերի վերացում, փոփոխում, լրացում՝ իրավունքի էությունն իր դրսևորման մեջ դարձնելով ամբողջական, համապատասխանող: Իրավունքի իրականացման արդյունքը ոչ միայն օրենսդրի կողմից նորմերում դրված մասնավոր նպատակի կենսագործումն է, այլ նաև իրավունքի՝ որպես էության և սկզբունքի կենսագործումը:

Իրավունքի կենսագործման միասնական կառուցակարգի առաջին բաղադրամասն իրավունքի (որպես օբյեկտիվ էության, սկզբունքի կամ իդեայի) պահանջները դրական իրավունքի վերածելու, դրանց պաշտոնական նորմատիվ ձև տալու կառուցակարգն է, որի իրականացման ձևն իրավաստեղծագործությունն է: Իրավունքի կենսագործման այս ձևն այն միջոցն է, որի օգնությամբ ընտրված այս կամ այն հնարավորությունը վերածվում է դրական իրավունքի, համապարտադիր նորմերի[1]:

Իրավաստեղծ (նաև իրավահիրականացնող) գործունեության կոչումը հենց այն է, որ ընտրի իրավական կարգավորման այնպիսի հնարավորություն, որն ավելի լրիվ է համապատասխանում հասարակության բնույթին, նրա զարգացման օբյեկտիվ պահանջներին և առանձնահատկություններին: Սակայն իրավական այս կամ այն հնարավորության և այն դրական իրավունքի ձևով իրականության վերածման միջև ընկած է բավականին երկար ու բարդ տարածություն, որն իրավական կարգավորումը չի անցնում միանգամից, անխոչընդոտ, ինքնաբերաբար: Այդ տարածության անցումը և իրավունքի վերածումն օբյեկտիվ իրականության[1] օբյեկտիվ իրավունքի կախված են փոխպայմանավորված հանգամանքներից, ներառյալ որոշակի օբյեկտիվ օրինաչափություններից, սուբյեկտիվ գործոններից, մասնավորապես՝ գաղափարական, քաղաքական, գիտատեսական նախադրյալներից: Այս գործընթացի վրա ազդող գործոն կարող է դառնալ նաև պատահականությունը:

Այսպիսով, իրավունքի ձևականացման կառուցակարգը միասնական, բարդ, սակայն տարերային գործընթաց չէ: Այն ըստ էության կազմված է զանազան իրական գործողությունների շղթայից, որոնք կարելի է անվանել իրավունքի ձևականացման գործընթացի փուլեր:

Այս գործընթացի կարևորությունը նկատել էին դեռևս խորհրդային իրավունքի տեսաբանները: Օրինակ՝ Լ. Ն. Զավադսկայան այդ առիթով ունի մեզ հետաքրքրող որոշակի մոտեցումներ. առաջին՝ իրավունքի ճշգրիտ գործողության նորմատիվ պայմանների ստեղծումը հեղինակը դիտում է «իրավական կարգադրագրերի իրա-

[1] Սակայն ինքը՝ դրական իրավունքը ևս դեռևս չիրացված իրավական հնարավորություն է: Դրական իրավունքը դառնում է իրականություն միայն մարդկանց և կազմակերպությունների կենսական վարքագծում իրականացվելու, իրավակարգի հաստատման դեպքում:

կանացման գործունեություն», երկրորդ՝ նա առաջ է քաշել նաև իրավունքի կենսագործման այնպիսի տեսակի գաղափարը, ինչպիսին է «կոնկրետացումը»: Լ. Ն. Զավադսկայան այդպիսի մոտեցումն արդարացնում էր նրանով, որ դա «հնարավորություն է տալիս ցույց տալու, թե ինչպես են իրականացվում նորմատիվ կարգադրագրերը, ինչպիսի իրավական գործընթացում է դա տեղավորվում, և ինչպես են ազդում դրա վրա այն սոցիալական պայմանները, որոնցում այն ընթանում է»[1]: Այս համատեքստում նա ենթադրում է, որ «կարելի է խոսել իրավաիրականացնող (կենսագործող) գործունեության փուլի մասին, որն ընդգրկում է պետական մարմինների գործունեությունը՝ ուղղված իրավական կարգադրագրերի բանական (ռացիոնալ) համակարգի ստեղծմանը, ինչը որոշակիացնում է սկզբնական նորմատիվ ակտը: Այդ փուլում դեռևս չկան որոշակի իրավական հարաբերություններ: Իրավական կարգադրագրերի իրացման (ռեալիզացիայի) գործունեությունը դրսևորվում է իրավունքի ճշգրիտ գործողության համար նորմատիվ պայմաններ ստեղծելով»[2]:

Իրավաստեղծագործությունն ընդհանրապես վարույթային, ընթացակարգային գործունեություն է: Նպատակին հասնելու համար իրավաստեղծագործության սուբյեկտները կամ նախաձեռնողները որոշակի հերթականությամբ կատարում են գործողություններ, երբեմն նաև՝ կրկնվող, և այդպես իրավունքի կենսագործման այս կառուցակարգի փուլերը, հետևելով իրար, նախապատրաստելով հաջորդին, ավարտում են իրավունքի ձևականացման կառուցակարգի աշխատանքը: Այդ աշխատանքի արդյունքն է համարվում առկա, գործող, պաշտոնական ուժ և հեղինակություն ունեցող դրական իրավունքը:

Դեռևս խորհրդային իրավունքի տեսության մեջ տարբերում էին իրավական նորմերի ստորակարգությամբ պայմանավորված սկզբնական և հետագա նորմերը (վերջիններս ստացան որոշակիացնող նորմ անվանումը): Այդպիսի մոտեցման համաձայն՝ «սկզբնական նորմն իրացվում է որոշակիացնող, ածանցյալ ակտերի ստեղծման, մեկնաբանողական գործունեության միջոցով, որոնք վերացնում են սկզբնական նորմը հասկանալու անորոշությունները և կատարվում են համապատասխան պետական մարմինների կողմից: Իհարկե, իրավական նորմերի որոշակիացումը, մտնելով իրավունքի իրականացման գործընթացի մեջ, չի դադարում իրավաստեղծագործություն լինելուց: Սակայն մտած լինելով նորմատիվ կարգադրագրերի իրականացման կառուցակարգի մեջ՝ այն ձեռք է բերում հատուկ հատկանիշներ, որոնք թույլ են տալիս ելակետային նորմերը և ակտերը, դրանք կոնկրետացնող ակտերը դիտարկել իրացման (իրականացման) տեսանկյունից»[3]:

Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ իրավունքի ձևականացման (դրական իրավունքի վերածման) կառուցակարգը գործում է փուլային ընթացակարգով: Սակայն հարց է առաջանում, իսկ որոնք են այդ փուլերը[4]: Իրավունքի ձևականացման փու-

---

[1] Правовая система социализма. Функционирование и развитие /Отв. ред. А.М. Васильев, М., 1987, էջ 121:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 122:

[4] Իրավունքի կենսագործման իրավաբանական գործընթացի փուլերի գաղափարը տվել է Ա.Գ. Վաղարշյանը: Ելնելով այն հանգամանքից, որ Հայաստանի իրավական համակարգն իր ձևակազմական հատկանիշներով ռոմանագերմանական իրավական համակարգ է, նա առաջարկել է իրավունքի կենսագործման կառուցակարգի երեք փուլերի գաղափարը: Առաջին փուլում տեղի է ունենում բնական կամ այլ կերպ հասկացված իրավունքի ամրագրումն օրենքում՝ իրավունքին նորմատիվ ձև, ուժ տալու միջոցով: Իրավաբանական իրավահասկացողության (բնական-իրավական և ազատական-իրավաբանական) տեսանկյունից՝ իրավունքի իրականացման կառուցակարգի առաջին փուլն իրավունքի, այսպես կոչված, պոզիտիվացման փուլն է, դրա արտահայտությունն օրենքի (լայն իմաստով) տեսքով: Այսպիսով, իրավունքն իրացվում է իրավական օրենքում իրավաստեղծագործության ձևով: Երկրորդ՝ «պոզիտիվ իրավունքի իրականացման փուլում ընթացք են ստանում օրենքի իրականացման տարբեր կառուցակարգերը, որոնց օգնությամբ տեղի է ունենում օրենքի պահանջների

լերի շրջանակի հիմնահարցը պարզելու համար անհրաժեշտ է ունենալ օբյեկտիվ չափանիշ, հակառակ դեպքում կարելի է տարանջատել դրա փուլերի բավականին երկար շղթա՝ հիմք ընդունելով, օրինակ՝ իրավաստեղծ գործառույթներ իրականացնող մարմինների ստորակարգային կառուցվածքը: Սակայն, մեր կարծիքով, ամենից հարմար և ճիշտ չափանիշը, որ կարելի է դնել իրավունքի ձևականացման գործընթացը փուլերի բաժանելու հիմքում, տվյալ իրավական համակարգում իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգային ստորակարգությունն է: Այդ չափանիշը բավականին հստակ, ձևականացված միջոց է իրավունքի նորմատիվացման, դրականացման, պաշտոնականացման կառուցակարգում առկա փուլերը վեր հանելու համար:

Իրավունքին ձև տալու, պաշտոնական ձևերում ամրագրելու գործընթացը, Վ.Վ. Լազարևի խոսքերով, իրենից ներկայացնում է «իրավունքի որոնում»: «Այդ հանգամանքը՝ իրավունքի որոնումը, կարելի է մեկնաբանել դրականության դիրքերից՝ իրավունքի նշանակություն տալով իշխանական այն որոշմանը, որը ձևավորվում է օրենսդիր գործունեության սահմանված ընթացակարգերին հետևելու գործընթացում: Սակայն օրենսդրի իրավակենսագործող գործունեության քննարկման համար մեծ հնարավորություններ են բացվում, եթե իրավունքը դիտարկվում է որպես երևույթ, որը գոյություն ունի մինչև օրինաստեղծագործությունը և դրանից դուրս: Օրենսդիրն այդ դեպքում որոնում է իրավունքը, հետևում է դրան՝ ձևակերպելով օրենքի նորմերը»[1]: Այսպիսով, ցանկացած իրավաստեղծի (օրինաստեղծի) առջև կանգնած է խնդիր՝ հայտնաբերել, որոնել իրավունքը և այն ձևականացնել իրավունքի աղբյուր համարվող ձևերում: Այստեղ շատ կարևոր են նաև իրավական զուգահեռական (կորելացիոն) կապերի պահպանումը և հաշվի առնելը, որոնց վրա հատուկ ուշադրություն է հրավիրում Յ. Ա. Տիխոմիրովը: Ըստ նրա՝ «Հանրային իրավունքի կյանքը չի հանգեցվում միայն նորմերի կամ ինստիտուտների ի հայտ գալուն: Եթե բանը հանգեր դրան, ապա հասարակության իրավական ոլորտը և պետությունը կլինեին զարդարված բեմից ոչ ավելին: Դրանում չէին լինի իրավական կոմբինացիաները և քայլերը, իսկ գլխավորը՝ դրանք շարժման մեջ դնող խաղացողները: Սակայն նույնիսկ քաոսային շարժման մեջ իրավական նորմերը և ինստիտուտները կորցնում են իրենց արդյունավետությունը և բախվում են միմյանց, հակասում իրար: Անխուսափելի են «դատարկությունները»՝ իրավական բացերը: Իրավական գործողությունների ձգանների հայտնաբերման համար անհրաժեշտ է նրանց միջև գտնել այն կախվածությունները, որոնք արտացոլում են ներքին իրավական օրինաչափությունները: Չէ՞ որ իրավունքի ազդեցությունը մարդկանց վարքագծի և հասարակական գործընթացների վրա չի հանգում օրենքի կամ այլ ակտի ընդունմանը: Կարևոր է դրանում որոշել կարգադրագրերի հավաքածուն, որոնք առաջ են բերում և ծնում տարբեր տեսակի իրավաբանական գործողություններ և որոշումներ: Այլ խոսքով՝ հայտնաբերել և օգտագործել իրավաբանական զուգահեռությունները (կորելացիաները)»[2]: Այդ զուգահեռումը պետք է իրականացվի հասարակության տնտեսական, քաղաքական, սոցիալական համակարգերի հետ, հակառակ դեպքում տեղի կունենա իրավական ձևերի (նորմերի) բացարձակացում՝ առանց վերջնական լուրջ արդյունքների ու արդյունավետության: Իրավունքի կենսա-

---

կոնկրետացում՝ սկսած ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի ընդունումից մինչև օրենքի նորմերի մեկնաբանում և այլն: Երրորդ փուլում, որն ավարտական փուլն է, տեղի է ունենում իրավունքի բուն իրականացումը: Հենց այս փուլում է, որ իրավունքը հնարավորությունից վերածվում է իրականության», կենսագործվում է (տե՛ս **Ա. Վաղարշյան,** Իրավաբանական իրավահասկացողությունը և «իրավունքի իրականացում» հասկացության հիմնախնդիրները// Իրավագիտության հարցեր, Երևան, 2006, թիվ 2-3, էջ 7-8):

[1] **Лазарев В.В.,** Действие права / Проблемы теории государства и права. / Под. ред. В.С. Нерсесянца, М., 2002, էջ 419-420:

[2] **Тихомиров Ю.А.,** Современное публичное право, М., 2008, էջ 329:

գործման կառուցակարգում իրավունքի ձևականացման փուլերի առանձնացումն արտացոլում է իրավական համակարգի ներքին նորմատիվ կապերը: Ի տարբերություն իրավական ձևերի (ակտերի) հասարակ թվարկման, թեկուզև դասակարգմամբ, այն հնարավորություն է տալիս վերլուծել և գնահատել դրանց իրական հարաբերակցության, միմյանց շարունակելու և որոշակիացնելու վիճակը և դրա արդյունավետությունը: Այս պարագայում հնարավոր է դառնում իրականացնել ամեն մի փուլի արդյունքների (ընդունած նորմատիվ ակտերի) զուգահեռումները մի շարք ուղղություններով[1]:

Այսպիսով, իրավունքի ձևականացման գործընթացի բնութագրումը՝ որպես որոնողական (նաև հետազոտական) աշխատանք, շատ կարևոր է, որովհետև պետք է նկատի ունենալ, որ իրավունքի բովանդակությունը որոշակիորեն պայմանավորված է նաև իրավագիտակցությամբ[2]: Այդ հանգամանքը վկայում է, որ իրավունքի, իրավական բովանդակության դրսևորումը և՛ իր ներուժով, և՛ փաստացի բազմատարբերակ է, բազմազան իր հնարավոր բովանդակությամբ և նաև հնարավոր սոցիալական հետևանքներով: Հետևաբար, ճիշտ են այն տեսաբանները, ովքեր իրավունքի ձևականացման գործընթացը դիտարկում են որպես կարգավորիչ տարբերակի ընտրության հիմնախնդիր: Այսպես, Ա. Ն. Բերեժնովի դիպուկ դատողությամբ՝ «Իրավունքի բովանդակության ձևավորման, դրա փոփոխման և զարգացման, սրա հետ կապված նաև իրավական պատկերացումների փոփոխությունն ամենից առաջ ընտրության հիմնախնդիր է, հնարավոր այս կամ այն տարբերակին նախընտրություն տալու հիմնախնդիր, և այդ իմաստով ցանկացած որոշում իրենից ներկայացնում է սուբյեկտիվ–սոցիալական ստեղծագործության դրսևորում, որը չի հանգում ինչ-որ անպայմանի, ճակատագրով նախորոշվածի հայտնաբերմանը: Չէ՞ որ բոլոր դեպքերում գործնականում հնարավոր շատ տարբերակներից կարող է տեղի ունենալ իրավական զարգացման միայն մեկ կոնկրետ-պատմական տարբերակը: Դա նշանակում է, որ այդ հիմնախնդիրը և դրա հնարավոր լուծումն իր հիմքերով ունեն մարդկանց ազատ կամքի հարաբերական ազատություն... նաև իրավական պատկերացումների, նախասիրությունների, իրավաստեղծագործության և իրավահիրականացման ոլորտում»[3]:

Իրավունքի պաշտոնական աղբյուրներում ձևականացման գործընթացը ունենալով միասնական խնդիրներ, ներքուստ միատարր չէ, որովհետև իրավաստեղծագործության արդյունքներն իրարից տարբերվում են իրավաբանական ուժով: Փորձենք վեր հանել այդ գործընթացի ներքին տարրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի օրինակով՝ հիմք ընդունելով ներպետական մաս-

---

[1] Տեսաբաններն այս գործընթացում հնարավոր են համարում հետևյալ զուգահեռումները. ա) օրենքի դերի բարձրացումը տանում է ենթաօրենսդրական ակտերի տեսակարար կշռի նվազման, բ) պետական կարգավորման ոլորտների նեղացումը հանգեցնում է լոկալ իրավաստեղծագործության աճի, գ) ինքնակարգավորման ակտիվացումը փոքրացնում է որոշակիացված կարգավորման անհրաժեշտությունը, դ) իրավական ակտերի համակարգվածության և ստորակարգության պահպանումը թույլ է տալիս դրանք օգտագործել համալիր փոխկապված խնդիրների լուծման համար, ե) իրավակիրառման արդյունավետությունը փոքրացնում է նորմատիվ նոր ակտերի ընդունման անհրաժեշտությունը, զ) միջազգային պայմանագրերի կնքումը պայման է ներքին իրավաստեղծագործության արդյունավետության համար և այլն (տե՛ս **Тихомиров Ю.А.,** նշվ. աշխ., էջ 331-332):

[2] Իրավունքի ծագումը, ամբողջ իրավական իրականության զարգացման տրամաբանությունը և բովանդակությունն անվիճելիորեն վկայում են, որ իրավական նորմերը և իրավունքի համակարգը ընդհանուր առմամբ այսպես թե այնպես համարվում են իրավագիտակցության և իրավաստեղծագործության սուբյեկտների կողմից ամենից նշանակալի սոցիալական հիմնախնդիրներին և հակասություններին, հասարակական պրակտիկայի պահանջմունքներին հետևելու արդյունք (տե՛ս Проблемы Теории государства и права. / Под. ред. М.Н. Марченко, М., 2001, էջ 344):

[3] Проблемы теории государства и права, 2001, էջ 344:

նավոր իրավունքի ոլորտում իրավունքի աղբյուրների ստորակարգությունը: Ներպետական մասնավոր իրավունքի ոլորտի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այստեղ իրավունքի ձևերը և իրավական կարգավորման միջոցները (անալոգիան, իրավական սովորույթը և այլն) դրսևորվում են առավել ամբողջական և լրիվ: Մասնավոր իրավունքի ոլորտում, օրինակ՝ քաղաքացիական իրավունքի, իրավունքի ձև համարվող նորմատիվ իրավական ակտերն են՝

ա) ՀՀ Սահմանադրությունը,

բ) ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները,

գ) ՀՀ սահմանադրական օրենքը,

դ) օրենսգրքերը և մասնավոր իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքները,

զ) ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը (հանրապետության նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության որոշումները, նախարարությունների, գործադիր իշխանության այլ մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը)[1]:

Մասնավոր իրավունքի ոլորտում աղբյուր համարվող նորմատիվ իրավական ակտերի ենթահամակարգում Սահմանադրությունից հետո կենտրոնական և գլխավոր տեղը զբաղեցնում են օրենսգրքերը, որովհետև այլ ակտերում ամրագրված մասնավոր իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն օրենսգրքերին[2]: Իրենց հերթին օրենքներն ունեն գերակայություն Հայաստանի Հանրապետության դրական իրավունքի այլ աղբյուրների, մյուս նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ: Իրավունքի աղբյուրների համակարգի այս սկզբունքը նշանակում է՝ ա) օրենքներն ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ: Մնացած իրավական ակտերը պետք է բխեն օրենքներից, չհակասեն օրենքներին, բ) բացի օրենսդիր մարմնից՝ խորհրդարանից, օրենքները չեն կարող ընդունվել, փոփոխվել, վերացվել այլ պետական մարմնի կողմից, գ) այլ իրավական ակտերն ընդունվում են օրենքների հիման վրա և պետք է համապատասխանեն օրենքներին:

Իրավունքի ձևերի ըստ իրավաբանական ուժի այս ստորակարգությունից բխում է, որ իրավունքի որոնման, ձևականացման, կենսագործման առաջին և ելակետային ձևը Սահմանադրությունն է, որը համարվում է իրավաստեղծագործության (օրինաստեղծագործության) հատուկ ընթացակարգի՝ սահմանադրական հանրաքվեի արդյունքը: Այսպիսի տեսական ենթադրության հիմքը Սահմանադրության՝ որպես իրավունքի էության, առաջին կարգի արտահայտիչ լինելն է, ինչից և բխում է Սահմանադրության գերակայությունն իրավական համակարգում: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն արդի ազգային իրավունքի աղբյուրների համակարգում ունի բարձրագույն իրավաբանական ուժ և գործում է անմիջականորեն: Այս սկզբունքը նշանակում է, որ բոլոր օրենքները և այլ իրավական ակտերը, որոնք ընդունվում են պետական իշխանության մարմինների կողմից, չպետք է հակասեն Սահմանադրությանը: ՀՀ Սահմանադրության այս դրույթը որոշակիացված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրում է ՀՀ տարածքում իրավական կարգավորման սկզբունքները: ՀՀ Սահմանադրությունը ՀՀ օրենսդրության իրավական հիմքն է: ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և նրա նորմերը գործում են անմիջականորեն: ՀՀ օրենքներն ու իրավական այլ ակտերն ընդունվում են ՀՀ Սահմանադրության հիման վրա կամ ի կատարումն դրա և չպետք է հակասեն ՀՀ Սահմանադրությանը:

---

[1] Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ հոդվածը, 550-րդ հոդվածի 2-րդ կետը և այլն:

[2] «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «օրենքները չպետք է հակասեն ՀՀ Սահմանադրությանը, գործող օրենքներին, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներին: Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում ՀՀ մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին» (տե՛ս «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, հոդված 9):

ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին հակասող ճանաչված իրավական այլ ակտերն իրավաբանական ուժ չունեն»:

Իրավական կարգավորման և իրավունքի աղբյուրների համակարգի համար կարևոր նշանակություն ունեն Սահմանադրության անմիջական գործողությունը, ինչպես նաև բարձրագույն ուժը[1]: Իրավունքի ձևականացման համար կարևոր նշանակություն ունի Սահմանադրության գերակայությունն իրավական համակարգում: Սահմանադրությունը որոշակի չափանիշներով շրջանակի մեջ է դնում իրավունքի ձևականացման գործընթացները և նույնիսկ այն դեպքում, երբ ձևականացումը հասել է իր եզրափակիչ փուլին՝ նորմատիվ իրավական ակտի ընդունմանը և գործողության մեջ դնելուն, Սահմանադրությունն իր անմիջական գործողության ուժով պահպանում է գերակայությունը: Սահմանադրության գերակայությունը պետք է հասկանալ «առաջին՝ Սահմանադրությունն առաջատար տեղ է գրավում իրավական համակարգում, օրենսդրության ճյուղերում: Երկրորդ՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, բոլոր մնացած ակտերը ընդունվում են ի կատարումն Սահմանադրության, իսկ տարաձայնության դեպքում գործում է Սահմանադրությունը: Երրորդ՝ Սահմանադրությունը հզոր իրավակազմավորող գործոն է ինչպես իր անմիջական գործողության ուժով, այնպես էլ օրինաստեղծագործության վրա նորմատիվ արժեքային ներգործությամբ: Չորրորդ՝ սահմանադրական հասկացությունները գլխավոր նորմատիվ-իրավական չափանիշներ են բոլոր տեսակի ակտերի մեկնաբանման և կիրառման, իրավական գործողությունների կատարման համար»[2]:

Հայաստանի իրավական համակարգում իրավունքի աղբյուրների ստորադասության մեջ Սահմանադրությունից հետո հաջորդը սահմանադրական դատարանի՝ գործով ըստ էության կայացված որոշումներն են, որոնք ունեն նորմատիվ նշանակություն: «Այդ որոշումները հանդիսանում են իրավունքի բովանդակությունը կազմող վարքագծի կանոնների արտաքին արտահայտման այնպիսի պաշտոնական ձև, որն առավելապես նպաստում է իրավական կարգավորման նպատակների կենսագործմանը և իրավունքի ներքին լիարժեք իրականացմանը»[3]: Հետևաբար, դրանք Սահմանադրությունը որոշակիացնող և նորմատիվ նշանակություն ունեցող ակտեր են, որոնք ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ իրավունքի այլ աղբյուրների նկատմամբ, ինչը բխում է հենց Սահմանադրության բարձրագույն ուժից:

Իրավունքի կենսագործման կառուցակարգում ՀՀ Սահմանադրական դատարանի իրավունքի աղբյուր հանդիսացող որոշումների նշանակության իմաստավորման հարցում բավարարվենք այսքանով, որովհետև այդ որոշումները տեղավորվում են իրավունքի կիրառման, այլ ոչ թե իրավաստեղծագործության կառուցակարգում: Այդ պատճառով և Սահմանադրության հատկություններով պայմանավորված՝ խորհրդարանական կամ այլ տեսակի օրինաստեղծագործությունը համարվում է ի-

---

[1] Սահմանադրությունը՝ որպես երկրի հիմնական օրենք, ունի ընդհանրացված բնույթ: Դրա դրույթներն ավելի մանրամասն իրավական կարգավորում են ստանում մնացած նորմատիվ ակտերում, ճյուղավորվում են օրենսդրության մեջ: Այդ ընթացքում առաջանում է Սահմանադրության նորմերի՝ ընթացիկ օրենսդրության մեջ տարրալուծվելու, Սահմանադրության առաջնայնությունը կորցնելու վտանգ: Որպեսզի դա տեղի չունենա, Սահմանադրությանը տրված է անմիջական և ուղղակի գործողություն: Այդ հիմքով իրավունքի շահագրգռված սուբյեկտն անհրաժեշտության դեպքում կարող է հենվել միայն Սահմանադրության նորմերի և ձևակերպումների վրա հատկապես իր իրավունքները դատարանում պաշտպանելու դեպքում:

[2] **Тихомиров Ю.А.,** նշվ. աշխ., 2008, էջ 249:

[3] Տե՛ս **Մանասյան Ա.Ա.,** Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում, իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2012, էջ 10:

րավունքի կենսագործման (ձևականացման) կառուցակարգի երկրորդ փուլը: Օրենքների ընդունումը, իրավական կարգադրագրերի ձևակերպումն օրենքներում համարվում են ամենից բարդ և ամենից շնորհակալ գործը, որ կատարում են օրենսդիրները, և սկզբունքորեն նորմալ պայմաններում իրավունքի որոնումը և ձևակերպումը պատշաճ են միայն օրինաստեղծագործությանը, այլ ոչ թե ենթաօրենսդրական իրավաստեղծագործությանը[1]: Տեսական գրականության մեջ, որպես կանոն, իմաստավորվում են իրավունքի, բայց ոչ օրենքի գործառույթները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ օրենքի և իրավունքի գործառույթները միակարգ են և մեծամասամբ համընկնող: Իրավունքն օրենքի միջոցով կատարում է բազմաթիվ գործառույթներ: Այսպես, Ա. Գորլիցը նշում է, որ իրավունքն օրենքի միջոցով կատարում է կայունացնող, կարգավորող, նորացնող, հիմնախնդիրները լուծող, լեգիտիմացնող և այլ գործառույթներ[2]: Օրենքին վերագրվող այդ գործառույթներից բացի, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն կատարում է միջնորդավորող գործառույթ, այսինքն՝ օրենքը միջնորդ է Սահմանադրությամբ նախագծված, նախորոշված՝ հասարակության ու պետության իրավական կազմակերպման նախագծի և սոցիալ-քաղաքական փաստական կացության միջև[3]:

Ինչպես իրավունքի իրականացումը նեղ իմաստով ընթանում է որոշակի պահանջների ու պայմանների պահպանմամբ, այնպես էլ իրավունքի կենսագործումն օրենքում՝ իրավաստեղծագործության միջոցով, ընթանում է որոշակի պայմանների, սկզբունքների ու պահանջների պահպանմամբ, որոնք մշակվել են պետահիրավական մտքի կողմից և հաստատվել պրակտիկայում[4]:

Խորհրդարանական կամ այլ տեսակի օրինաստեղծագործությունը որոշակիացնում է Սահմանադրության մեջ ամրագրված իրավունքը, ինչը կարելի է դիտարկել որպես «հասարակական հարաբերություններում պարունակվող ու հանգամանքներով օբյեկտիվ և տեղի ու ժամանակի պայմաններով բնական պահանջներ, որոնք բխում են իրերի բնույթից»[5]:

Իրավունքի ձևերի ստորակարգության հաշվառմամբ իրավունքի կենսագործման, դրան նորմատիվ ձև տալու հաջորդ փուլը ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունն է, որը, լինելով երկրորդական գործընթաց, որոշակիացման ձևով կենսագործում է Սահմանադրության մեջ և օրենքներում ամրագրված իրավունքը: Ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունը՝ որպես Սահմանադրության մեջ և օրենքներում ամրագրված իրավունքի որոշակիացում, դրանց իրավական կարգադրագրերի կենսագործում, կարող է տեղի ունենալ տարբեր սխեմաներով: Դա պայմանավորված է իրավական կարգավորման ոլորտի առանձնահատկություններով: Հնարավոր սխեմաներից մեկն այն է, որ այստեղ իրավական կարգավորումն

---

[1] Տե՛ս **Лазарев В.В.,** նշվ. աշխ., էջ 418, 420:

[2] Տե՛ս Politishe Funktion Des Recht /**Axel Gorlitz**. Wieslagen: Akad, verl.-Ges., s. 55 ff:

[3] Տե՛ս **Горбань В.С.,** Понятие, теория и проблемы формирования общей концепции эффективности законодательства. М., 2009, էջ 34: Վ. Ս. Գորբանը, բացի միջնորդավորողից, օրենքին վերագրում է կարգավորիչ, փոխզիջումային, քաղաքական գործառույթներ:

[4] Ազատության, իրավունքի և պետականության պատմական զարգացման ընթացքում հակահիրավական օրենքի դեմ պայքարի համար ձևավորվել և հաստատվել են հատուկ ինստիտուտներ, ընթացակարգեր և կանոններ, որոնք կարելի է որակել որպես իրավաստեղծագործության (իրավունքի պոզիտիվացման), ինչպես նաև օրենքի՝ իրավունքին համապատասխանության արդյունավետ վերահսկողության կանոններ: Դրանցից են, մասնավորապես, իշխանությունների տարանջատումը, հակակշիռների և զսպիչների համակարգը, ընդհանուրդատական, սահմանադրական-դատական, դատախազական վերահսկողությունը և հսկողությունը օրենքների որակի նկատմամբ (տե՛ս Проблемы общей теории государства и права. / Под. ред. В.С. Нерсесянца, М., 1999, էջ 189):

[5] **Лазарев В.В.,** Действие права / Проблемы теории государства и права. / Под. ред. В.С. Нерсесянца, М., 2002, էջ 418:

անպայման ենթադրում է որոշակիացում (ընդ որում՝ նաև օրենքների միջոցով): Սկզբնական նորմը որոծակիացնող ակտերի դերն այս տեսակի իրավական ոլորտներում շատ մեծ է: Այսպես, օրինակ՝ քաղաքացիական օրենսգրքի մանրամասնեցում որոշակիացումը կատարվում է մի շարք որոշակիացնող օրենքների միջոցով, որոնց հաջորդում են գործադիր իշխանության զանազան որոշակիացնող իրավական ակտերը: Այդ ակտերի քանակը կարող է լինել բավականին շատ: Այս գործընթացում, իհարկե, շատ կարևոր նշանակություն ունեն Սահմանադրության բարձրագույն ուժը և անմիջական գործողությունը: Իրավունքի կենսագործման մյուս հնարավոր սխեման այն կառուցակարգն է, որում չկա որոշակիացնող նորմատիվ իրավական ակտերի երկար շղթա: Օրինակ, քրեական իրավունքի ոլորտում այդ սխեման ենթադրում է միայն Սահմանադրությունը և քրեական օրենսգիրքը՝ համապատասխանաբար իրավունքի կենսագործման այնպիսի ձևերը, ինչպիսիք են սահմանադրումը և օրենսդրումը:

Իրավունքի կենսագործումը որոշակիացման ձևով ենթադրում է երկու ուղղություն՝ կախված նրանից, թե ինչի որոշակիացմանն է ուղղված այդ գործունեությունը՝ իրավունքի նորմի բովանդակությա՞ն, թե՞ դրա կիրառման որոշակիացմանը: «Որպես իդեալական կանոն պետք է նկատի ունենալ, որ սուբյեկտների նյութական իրավունքները, նրանց նյութական պատասխանատվության որոշակիացումը հնարավոր և թույլատրելի են միայն օրենսդրությամբ նշված դեպքերում, դրանով սահմանված շրջանակներում, հատուկ օրենսդրական հանձնարարությունների ուժով»[1]: Մնացած դեպքերում ենթաօրենսդրական որոշակիացումը պետք է ուղղված լինի Սահմանադրության և գերակայությամբ օժտված օրենքի կիրառման կազմակերպմանը: Այս դեպքում, ինչպես ճիշտ նշվում է գրականության մեջ, «պետք է սպառիչ կերպով որոշվեն կենսագործման կառուցակարգը, գործողությունների հերթականությունը, ընթացակարգը, իրացման երաշխիքները, իրավունքների պաշտպանության կառուցակարգերը, ինչպես նաև նյութական իրավունքի իրացման գործընթացի մասնակից սուբյեկտները, կազմակերպական, տեղեկատվական, վարույթային իրավահարաբերությունների մասնակիցները, իրացման գործընթացի օրինականության վրա վերահսկող սուբյեկտները: Այդ դեպքում շատ կարևոր է, որ կիրառման ընթացակարգը չդժվարացնի նյութական իրավունքի նորմերի իրացումը, հակառակ դեպքում վարույթային նորմերը կարող են արգելակել նյութական իրավունքի նորմերի գործողությունը, ստեղծել դժվարություններ դրանց իրականացման գործընթացում»[2]:

Հայաստանի Հանրապետության օրինակով, որի իրավական համակարգն իր ձևակազմական հատկանիշներով ռոմանագերմանական է, իրավունքի կենսագործման իրավաբանական գործընթացն անցնում է հետևյալ փուլերը[3]:

Առաջին փուլում տեղի է ունենում բնական կամ այլ կերպ՝ հասկացված իրավունքի ամրագրում Սահմանադրության մեջ՝ իրավունքին սահմանադրական նորմատիվ ձև և ուժ տալու միջոցով: Իրավաբանական իրավահասկացողության (բնական-իրավական և ազատական-իրավաբանական) տեսանկյունից իրավունքի կենսագործման կառուցակարգի առաջին փուլն իրավունքի, այսպես կոչված, սահմանադրականացումն է, իսկ դրա արտահայտությունը՝ իրավական ձևը, արդյունքը Սահմանադրությունն է՝ որպես հիմնական օրենք:

Ընթացիկ, ոչ սահմանադրական օրինաստեղծագործությունն իրավունքի կեն-

---

[1] Правовая система социализма. Функционирование и развитие / Отв. ред. А.М. Васильев, М., 1987, էջ 122:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 123:

[3] Տարբեր իրավական համակարգերում իրավունքի կենսագործման իրավաբանական կառուցակարգերի մասին մանրամասն տե՛ս Теория государства и права. Под ред. В.М. Корельского и В.Д. Перевалова. М., 1997, էջ 377-378:

սագործման (ձևականացման) այն կառուցակարգն է, որը հաջորդում է սահմանադրմանը, և որը որպես փուլ որոշակիացնում է Սահմանադրության մեջ ամրագրված իրավունքը: Հետևաբար, օրենքն իրավունքի կենսագործման և արտահայտման ձևն է, որի միջոցով իրավունքը ձեռք է բերում պետահիշխանական համապարտադիր ճանաչում և պաշտպանություն, օրինական ուժ:

Լինելով իրավունքի օբյեկտիվ որակների արտահայտման ձև՝ օրենքը դառնում է իրավական: Իրավական օրենքը, որ ստեղծվում է իրավաստեղծագործության արդյունքում, իրավունքն է՝ ձեռք բերած ճանաչման պաշտոնական ձև, որոշակիացում և պաշտպանություն, մի խոսքով՝ օրինական ուժ[1]: Այսպիսով, իրավունքը ժողովրդի անմիջական իրավաստեղծագործության միջոցով կենսագործվում է Սահմանադրության մեջ, իսկ այնուհետև օրենքում՝ օրինաստեղծագործության ձևով:

Իրավունքի ձևերի ստորակարգության հաշվառմամբ իրավունքի կենսագործման, դրան նորմատիվ ձև տալու **երրորդ փուլը** ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունն է, որը որպես գործընթաց որոշակիացման ձևով կենսագործում է Սահմանադրության մեջ և օրենքներում ամրագրված իրավունքը: Իրավունքի կենսագործման և ձևականացման այս փուլում ընթացք են ստանում օրենքի կենսագործման տարբեր կառուցակարգերը, որոնց միջոցով տեղի է ունենում օրենքի իրավական պահանջների և դրույթների որոշակիացում: Այդ կառուցակարգի ձևերն են ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունը, օրենքների դրույթների մեկնաբանումը և այլն:

Բոլոր փուլերի գործողության «... արդյունքներն արտահայտվում են, որպես կանոն, առաջին՝ որոշակիացնող ակտերի համակարգի ստեղծմամբ, որն իրենից ներկայացնում է վարքագծի ավարտուն մոդել, և որը համարժեք արտացոլում և հետևողականորեն զարգացնում է սկզբնական նորմի դիրքորոշումը, չի հակասում այլ նորմերին (նորմերի համակարգին), այլ օրգանապես ներառվում է օրենսդրության ընդհանուր համակարգի մեջ, երկրորդ՝ ստեղծում է սկզբնական նորմի իրականացման կառուցակարգ»[2]: Իրավակենսագործող գործունեության համար կարևոր է սկզբնական նորմի որոշակիացման, հստակեցման, լրացման թույլատրելիության աստիճանի հարցը: Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ առաջին հերթին սահմանադրական չափանիշները և սկզբունքները, որոնց հիման վրա պետք է մշակվեն սահմանադրական (նաև օրենսդրական) նորմերի որոշակիացման չափորոշիչները: Գրականության մեջ այս կապակցությամբ առկա է մոտեցում, որ «նյութական իրավունքի կոնկրետացումը չի կարող դուրս գալ սկզբնական նորմատիվ դիրքորոշումների շրջանակներից: Մինչդեռ գործնականում որոշ կարգադրագրեր խեղաթյուրում են նյութական իրավունքի բովանդակությունը»[3]:

Այսպիսով, հիմք ընդունելով իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգային ստորակարգությունը, կարող ենք եզրակացնել, որ իրավունքի կենսագործման կառուցակարգում իրավունքի ձևականացման փուլեր են համարվում սահմանադրումը, օրինաստեղծագործությունը, ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունը: Դրանցից ելակետային են համարվում սահմանադրումը և նրա արդյունքը՝ Սահմանադրությունը՝ որպես իրավունքի էության (գաղափարի,

---

[1] Իրավունքի պոզիտիվացման, այն իրավական օրենքի վերածելու գործընթացը, իրավունքի օբյեկտիվ որակների ու պահանջների հաշվառման անհրաժեշտությունից բացի, կախված է բազմաթիվ այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններից՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր, մշակութային և այլն: Օրենքի անհամապատասխանությունն իրավունքին կարող է լինել տիրող կարգերի իրավաբացաստող, իրավամերժող բնույթի, օրենսդրի հակահրավական դիրքորոշման կամ տարբեր տեսակի սխալների, բացթողումների ու թերությունների, իրավական և օրինաստեղծ ցածր մշակույթի և այլնի հետևանք (տե՛ս Проблемы общей теории государства и права. / Под. ред. В.С. Нерсесянца, М., 1999, էջ 71):

[2] Правовая система социализма. Функционирование и развитие /Отв. ред. А.М. Васильев, М., 1987, էջ 122:

[3] Տե՛ս նույն տեղում:

սկզբունքի) արտահայտման առաջնակարգ ձև: Մնացած երկուսը ստորակարգված են սահմանադրմանը, իսկ դրանց արդյունքները՝ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը, Սահմանադրության դրույթների որոշակիացման ձևով իրավունքի կենսագործումն են: Իրավունքի տեսության մեջ որոշակիացնող ակտը բնորոշում են հետևյալ կերպ. «Որոշակիացնող ակտը պետական մարմնի նորմատիվ ակտն է, որն ընդունվում է սկզբնական (հիմնարար) ակտի բովանդակության զարգացման համար, զարգացնում է հարաբերությունների կարգավորման հիմնական սկզբունքները, իրավունքների և պարտականությունների բովանդակությունը, մանրամասնում է իրավունքների և ազատությունների երաշխիքները, իրավունքի սուբյեկտների իրավունքների պաշտպանության կառուցակարգը»[1]:

Իրավունքի կենսագործման միասնական կառուցակարգի առաջին բաղադրամասն իրավունքի (որպես օբյեկտիվ էության, սկզբունքի կամ իդեայի) պահանջները դրական իրավունքի վերածվելու, դրանց պաշտոնական նորմատիվ ձև տալու կառուցակարգն է, որի իրականացման ձևն իրավաստեղծագործությունն է: Իրավունքի ձևականացման կառուցակարգը միասնական, բարդ, փուլային գործընթաց է: Իրավունքի ձևականացման փուլերի առանձնացման չափանիշը կոնկրետ իրավական համակարգում իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգային ստորակարգությունն է: Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի օրինակով՝ հիմք ընդունելով մասնավոր իրավունքի ոլորտում իրավունքի ներպետական աղբյուրների ըստ իրավաբանական ուժի ստորակարգությունը (ՀՀ Սահմանադրությունը, սահմանադրական դատարանի որոշումները, ՀՀ սահմանադրական օրենքները, օրենսգրքերը և մասնավոր իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքները, ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը), իրավունքի կենսագործման իրավաբանական գործընթացում կարելի է առանձնացնել երեք փուլեր: Առաջին փուլում տեղի է ունենում բնական կամ այլ կերպ հասկացված իրավունքի ամրագրում Սահմանադրության մեջ իրավունքին սահմանադրական նորմատիվ ձև և ուժ տալու միջոցով (սահմանադրում): Օրինաստեղծագործությունն իրավունքի կենսագործման (ձևականացման) այն կառուցակարգն է, որը հաջորդում է սահմանադրմանը և որը որպես փուլ որոշակիացնում է Սահմանադրության մեջ ամրագրված իրավունքը: Իրավունքի կենսագործման, դրան նորմատիվ ձև տալու երրորդ փուլը ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունն է, որը որպես գործընթաց որոշակիացման միջոցով (ձևով) կենսագործում է Սահմանադրության մեջ և օրենքներում ամրագրված իրավունքը:

СТРУКТУРНЫЙ СТРОЙ РЕАЛИЗАЦИИ ПРАВА (ФОРМИРОВАНИЕ ПОЗИТИВНОГО ПРАВА) И ЕЕ СОСТАВНЫЕ ЧАСТИ

Нарине Давтян

доцент кафедры теории и истории государства и права ЕГУ,
кандидат юридических наук

В работе рассматривается понятие «реализации права» с точки зрения концепции дифференциации права и закона и, путем теоретических обоснований, предлагается новое правовое понятие – **«юридический структурный строй реализации права»**, составными элементами которого являются формирование права

[1] Правовая система социализма. Функционирование и развитие /Отв. ред. А.М. Васильев, М., 1987, էջ 125:

(сути, или принципа, или идеи) в позитивное право (форму) и реализация позитивного права в общественных отношениях.

Первой составной частью единого структурного строя реализации права (в качестве объективной сути, принципа, или идеи) является преобразование требований права в позитивное право и придание им нормативной формы, а путь осуществления этого – правовое творчество. По примеру правовой системы РА, беря за основу иерархию внутригосударственных источников права по юридической силе в сфере частного права, автор выделяет три этапа правового процесса реализации права: конституирование, принятие законов и правовое творчество.

За юридическим структурным строем формирования права (превращения в позитивное право) следует структурный строй реализации позитивного права.

THE LEGAL FRAMEWORK AND THE STAGES OF THE FORMATION OF LAW (TRANSFORMATION INTO POSITIVE LAW)

Narine Davtyan
Docent of the YSU Chair of Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences

The article deals with the notion of "realization of law" from the point of view of the concept of differentiation of right and law and, through theoretical justification, proposes a new legal concept - **"legal structural order of the realization of right"**, the constituent elements of which are the transformation of law (essence, or principle, or idea) into a positive law (form) and the implementation of a positive law in public relations.

The first component of the unified structural order for the implementation of law (as an objective essence, principle, or idea) is the transformation of the requirements of law into a positive law and bringing them to a normative shape, through the legal creativity. Following the example of the RA legal system and taking as a basis the hierarchy of intrastate sources of law on the legal force in the field of private law, the author identifies three stages of the legal process of the realization of right: constitutionalism, adoption of laws and legal creativity.

The legal structural order of formation of positive law (transformation into a positive law) is followed by the structural order of the realization of the positive law.

Բանալի բառեր – *իրավունքի կենսագործում, իրավական կարգավորում, միասնական կառուցակարգ, իրավաստեղծ գործունեություն, իրավունքի կենսագործման փուլեր*
Ключевые слова: *реализация права, правовое регулирование, единая структура, правотворческая деятельность, стадии реализации права*
Key word: *realization of law, legal regulation, a unified structure, lawmaking activity, stages of the realization of law*